Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծում», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ուսումնական, վարչական և մշակութային կառույցների տեխնիկական վիճակի ուսումնասիրություն ու հետազոտություն», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Այգեհովիտ և Վազաշեն համայնքների ոռոգման համակարգորի վերակառուցման 2-րդ փուլ» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորում» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Օդորակիչների տեղադրման» և «Վանաձորի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տանիքի նորոգման» ծրագրերը.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն կարիքավոր հողօգտագործողներին» ծրագիրը.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Քասախի սոցիալական տան առանձին կառուցվածքերի ուժեղացում և հատակների վերակառուցում» ծրագիրը.

«Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագիրը.

«Կամերային երաժշտության ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին նվիրված տոնակատարություն» ծրագիրը.

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «Հետազոտական աշխատանքները ԱՄՆ-ի լաբորատորիաներում և դրանց շարունակությունը Հայաստանում» ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Գյումրու ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավարում» ծրագիրը.

Ամերիկայի հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր-Խարբերդում բնակելի սենյակի և ծածկի կառուցում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Ավստրիական Կարիտասի կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: